ԻԲՆ ԿՈՒՏԱՅԲԱ

ԳԻՐՔ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
(ՔԻՏԱԲ ԱԼ-ՄԱԱՐԻՖ)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Կարդա լեռ – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 1:

[2] Արարաղ (Ջուղի) լեռ – Տե՛ս Վակիդի, ծնթգր. 3:

[3] Կարդա գյուղ (Սասանին) – Կարդա է կոչվում չրջանը, որ գտնվում է Վերին Միջագետքում (Ջազիրա), որի չուրջ 200 բնակավայրերից (գյուղերից) գլխավորներն են ալ-Ջուդին և Սամանինը: (Karda and Bazabda (Ed.). EOI, CD-ROM, (IV: 639a)):

[4] Օսման խալիֆա – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 34:

[5] Օսման իբն Աֆֆան – Նույն Օսման խալիֆան է:

[6] Օմարի օրոք – Տե՛ս Արու Յուսուֆ, ծնթգր. 1:

[7] Կուռա – Կուռա կամ Կուրրա բերդը գտնվում էր Կապադովկիայի կողմերում: (Իբն ալ-Ասիր, էջ 378):

[8] Խարսիանոն (Խարչանա) – Բյուզանդական բանակաթեմ Փոքր Հայքում (ըստ Ալպոյաճյանի՝ Կապադովկիայում) 9–10-րդ դարերում: Կենտրոնն էր Կեսարիան, մյուս նշանավոր քաղաքներն էին՝ Նյուսա, Թերմա, Հոեկեպոտանդոս (Հոեդեպոդանդոս): Մանում էր հայկական բանակաթեմի մեջ: Բաղկացած էր առաջին Գալատիա և առաջին Կապադովկիա քաղաքային վարչություններից: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 710):

[9] Սամալու – ամրոց Փոքր Հայքում: Հնարավոր է, որ համապատասխանում է ուշ չրջանի Սամալ անունով բնակավայրին կամ միջնադարյան Ծամնդավ (Սամանդու) ամրոցին: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 840, հ. 4 էջ 484):

[10] Լուլուա – Բերդ Լեռնային Կիլիկիայում, Լամբրոնի դավառում, Տարսոն տանող ճանապարհին, Գուղլակի լեռնանցքի հյուսիսային ծայրամասում: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 605):

[11] Տիանա (Թուանա) – Քաղաք Կապադովկիայում:

[12] Պոտանդոն (Բաղանդուն) դետ – Հավանաբար Սարոս դետի վտակներից է, որի վրա է գտնվում նաև համանուն բնակավայրը Տավրոսյան լեռների Հարավահայաց լանջին, Տարսոնի ճանապարհին:

[13] Զապետրա (Զիրաթրա) — ամրոց Փոքր Հայքում, նրա հարավային կողմում, Սամոսատ – Մելիտինե ճանապարհին: (ՀՀՇՏԲ, հ. 2, էջ 269):

[14] Ամորիոն (Ամմուրիյա) – Նշանավոր ամրոց Փռյուգիայում: Գտնվում է Բյուզանդիայի ռազմական մեծ ճանապարհի վրա Կոստանդնուպոլսից՝ Կիլիկիա: Տեղադրված է Գորիլեոնից՝ հարավ-արևելք և Անկյուրայից՝ հարավ-արևմուտք (Amnuriya, M. Canard, EOI, CD-ROM, (I: 449a)):